Ս. ՊԱՏԱՐԱԳ

Ի ՀԻՇԱՏԱԿ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԱՀՎԱՆ ՔԱՌԱՍՈՒՆԵՐՈՐԴ ՕՐՎԱ

Կիրակի, օգոստոսի 8-ին, երանաշնորհ Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան քառասունքի առիթով Սբ. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցվեց հանդիսավոր Սբ. Պատարագ: Պատարագիչն էր Գերշ. Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը:

Հընթացս Սբ. Պատարագի Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը «Հայրապետ սուրբ և անբիծ և ընտրեալ յորովայնէ» բնաբանով իր խոսքն ուղղեց ներկաներին՝ անդրադառնալով երջանկահիշատակ Վեհափառ Հայրապետի կյանքին և հոգևոր ասպարեզում բոլորանվեր ծառայությանը (տե՛ս էջ 10): Տեղապահ Սրբազանը, հիշատակելով Վեհափառ Հայրապետի կյանքի վերջին ամիսներին ծանր հիվանդության պատճառած տառապանքն ու չարչարանքը, նշեց, որ «այն դարձավ ճշմարիտ ապաշխարանք՝ երկնային լուսեղեն օթևաններում վայելելու Աստծո փառավոր ներկայությունը»:

Հավարտ Սբ. Պատարագի Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի հանդիսադրությամբ և թեմական առաջնորդների ու Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի միաբանության ընթերակայությամբ կատարվեց հոգեհանգստյան մասնավոր պաշտոն Վեհափառ Հայրապետի շիրիմի առջև:

Սրբազան արարողությանը ներկա էին Վեհափառ Հայրապետի ազգականները, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի բարերարներ, ՀՀ կառավարության անդամներ, բազմաթիվ հավատացյալներ:

Արարողության ավարտին ներկաները հրավիրվեցին Վեհարան, ուր տրվեց հոգեճաշ:

ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ